

ճարին¹ ժողովէր զանձս, և եթէ² յայն ժամ ոչ կարէիր³ անուղ յերկուզէ միւսոյ առաքելոյ⁴ որ լինէր թեզ ուղեկից, իսկ այժմիկ թէ խնդրել էր թեզ ժամանակ, և երթեալ էր ի քաղաքս⁵ հրէից կամ հեթանոսաց բժշկութեամբն⁶ զոր

անէիր անդ, որչափ և կամէիր, այնչափ ժողովէիր ոսկի և արծաթ⁷, Չոգաւ Յուզայ⁸ առ քահանայապետսն զի վասն երեսուն արծաթոյ մերկասցի⁹ յամենայն մեծութենէ¹⁰:



Հ Ա Ր Ի Ի Ր Ա Մ Ե Ա Կ

Ր Է Ս Տ Ե Ն Ի Բ Ժ Ե Կ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ի Թ Ե Ա Ն

(Շար. անս Բզմ. 1922 էջ 167)

Բէստէն ժր.՞ դարու վերջերն և խի՞տրոյն սկիզբները ծաղկած համալսարանական հին հայ բժիշկներու երևելիներէն էր, անունը Միքայէլ Թնած էր Կ. Պոլիս 1774-1776 թուականներուն, և զաւակն էր (Ղալաթիոյ Ս. Լուսաորիչ եկեղեցիին աւագը, րէցներէն՝ Դաւիթ-Դանիէլեան կաթողիկոսական վէճերու միջոցին հաշտարարի մեծ զեր կատարող) նշանաւոր Տէր Պետրոս Քահանային, որուն անունով մեր բժիշկն ալ կը կոչուէր Տէր Պետրոսեան:

Տէր Պետրոս, որուն համար կ'աւան-

դուի՝ թէ կը մականուանէր Միխայիլ օղոս կամ Միխայիլեան, կ'ունենայ շատ զաւակներ. ասոնց երեքը մանչ էին. կրտսերը Միքայէլ Բժիշկն էր, իսկ երէցները՝ Սեւորոէ, Քերորէ, որոնք յետոյ բախտին բերումով կը ստիպուին գաղթել Կովկաս. հոն մականունին կը փոխեն «ՊԱՏԿԱՆՆԱՆ» ի, և հետզհետէ կ'ըլլան հայր այն նշանաւոր տաղանդներուն և վիպագիր-բանաստեղծներուն, որոնք Ռուսահայերուն ու ամբողջ Հայութեան մէջ «Պատկանեան» անունը սիրելի բրած են և պաշտելի:

1. Ս. զանձս սահարից:
2. Ե. ժողովիր զանձ և եթէ. — Ս. կը տարբերի Ե.էն արծաթ. — Հ. ժողովեալ էր թեզ զանձս, և թէ:
3. Ե. ոչ կամիր:
4. Ս. և Հ. առաքելոյն:
5. Ե. ուղեկից, այժմու թէ խնդրեալ էր թեզ ժամանակ և երթեալ էր ի քաղաքս. — Ս. ուղեկից, այժմու եթէ խնդրեալ էր ժամանակ ի պատճառս ինչ, երթալ ի քաղաքս: — Հ. ուղեկից, այժմ թէ խնդրեալ էր թեզ ժամանակ...
6. Հ. և հեթանոսաց, և բժշկութեամբ:
7. Ե. ժողովիր արծաթ և ոսկի. — Ս. ժողովեալ էր թեզ արծաթ և ոսկի:
8. Ե. Յուզայս. — Ս. և Հ. Յուզայ:
9. Ե. (բռնի զի) վասն երեսուն արծաթոյն. մերկասցի. — Ս. և վասն երեսուն արծաթոյ մերկասցաւ. — Հ. կը տարբերի Ս.էն զի փխճ և — Ի.

10. Ե. մեծութենէ (եւ դեռ յառաջ կը վարեալ այսպէս) զոր ունեցին զվերքն և փարիսեցիք. քանզի ճեպէին զգործն կատարել ետուն վաղվազակի զարծաթն զոր խնդրեաց, զի մասնեացէ նոցա՝ զոր խնդրինն:— Ս. մեծութենէն զոր ունէր, իսկ զվերքն և փարիսեցիք քանզի ճեպեալ էին զգործն կատարել, ետուն վաղվազակի զարծաթն զոր խնդրեաց, զի մասնեացէ զայն զոր խնդրէին: Ար զամենայն վասն մերոյ փրկութեան ի թեզ կրեցեր Միտմին որիկ Աստուծոյ, տարեալ ամենայնի հեղութեամբ և կամատրարար, պարզեա հաւատացելոցս է թեզ զՔրիստոսի մեղաց. և թեզ և Հար թում և սուրբ Հոգւոյ զփառ յաւիտեանս. — Հ. մեծութենէ, զի կաւորն զվերքն և փարիսեցիք. քանզի ճեպեալ էին զգործն կատարել, ետուն վաղվազակի զարծաթն, զոր խնդրեացն, զի մասնեացէ նոցա զայն, զոր նոցա խնդրէին յորում իշխանութիւն և փառք, յաւիտեանս ժամանակաց արեւոսալ ամէն:

Կը պատմուի թէ՛ «Պատկանեան» բառս միևնախիպ թուրքերէն մականունին թարգմանութիւնն եղած ըլլայ, և իբրև թէ՛ «միևնախիպ = պատկան»ին պարսկերէնն ալ լիստիտե (سید) ըլլալուն, ծնունդ տուած ըլլայ «Բէստէն» անունին, զոր մեր բժիշկը գործածած է միշտ կից՝ իւր «Տէր Պետրոսեան» մականունին: Հաւանաբար՝ դիւրութեան համար ըլլալու էր, որ Միքայէլ բժիշկը՝ բացի իւր հօրը անունէն՝ որդեգրած է «Բիստեան» օտարաճնչիւն տրտողուր, որով ճանչցուած Ֆիաց նա շարունակը:

Ինչպէս որ ալ եղած ըլլայ այս անունին ծագումը, կարևորը գիտնալ մեզ համար այն է՝ թէ՛ Միքայէլ նախապէս կ. Պոլսոյ մէջ կրթուելէ յետոյ, իւր ուսումնատեան Տէր Հօրը փոյթեալն զոհողութիւններով, եղբայրներուն հետ կը յղուի Վենետիկ Միսիթարեան Հայրերուն դպրոցը, ուր իւր ուսումը աւելի զարգացնելով՝ կը սորվի զբարբար լեզու և իտալերէն ու լատիներէն, և միանգամայն կը պատրաստուի բժշկութեան. կը յաճախէ ապա Պիզայի բժշկական Համալսարանը, ուրկէ ղէպի 1797 կամ 1799 թուականներուն փայլուն քննութիւններով կը վկայուի Տրքթոր-բժիշկ:

Բուական տարիներ իւր բժշկական արուեստը ի գործ կը զնէ իտալիոյ մէջ, բայց 1813ին կ'անցնի Եգիպտոս. կը հաստատուի փարաւոններու հրկիւն մայրաքաղաքը:

*
**

Եգիպտոսի վերածնունդի տարիներն էին. հռչակաւոր Մէհմէտ Ալիի իշխանութեան բարեբաստ ժամանակը, երբ ոսկի և արծաթ առատօրէն կը տեղար հոն, և երբ մեծանուն Պօղոս Պէյ Եւսուտֆ, Չմիւսնիացի այդ նշանաւոր Հայորդին, (որուն հետ Բէստէն ալ ունէր սերտ բարեկամութիւն), Եգիպտական կառավարութեան զրուսն անցած, զերիշխան վարչութեամբ հեղինակ կը հանդիսանար մեծամեծ բարեկարգութիւններու, ընկեր և զործակից ունեւ.

նալով իրեն ուրիշ երևելի Հայեր, որոնք՝ Եգիպտոսի Ժիօր՝ Գարու Պատմութեան մէջ իրաւամբ ժառանգած են խիստ փառաւոր էջեր՝:

Բէստէն Տէր Պետրոսեան Եգիպտի ափերուն վրայ՝ շուտով ճարտար բժիշկի մեծ անուն կը հանէ, և շատ չանցած Եգիպտոսի բղջիխին անձնական բժիշկն ըլլալու հազուադէպ պատուին կ'արժանանայ:

Առաջին անգամ էր որ Հայ բժիշկ մը այդպէս կը փայլէր Եգիպտական աշխարհին մէջ. շատ յարգ հիւանդանոց բղջիխի քով, սիրուելով կը սիրուի անկէ և բոլոր պատերազմներու մէջ անոր ընկերանալով, անբաժան ինամատարը կ'ըլլայ՝:

Եւ Մէհմէտ Ալի ալ բացարձակ և անյեղի վստահութիւն կ'ունենայ իւր բժիշկին, այնչափ որ երբ անգամ մը ծանր կերպով կը հիւանդանայ, Բէստէն ինամքներովը ու ճարտարութեամբ ապաքինելով հանդերձ, զայն յատկապէս Եւրոպա կը յղէ 1817ին, որպէս զի Վիէնայի երևելի վարպետ-բժիշկ Ֆրանք Բիէթրոյի հետ խորհրդակցի իւր կատարեալ ապաքինումին համար՝:

Բէստէն այս ճամբորդութիւնը կատարելէ ու բղջիխին փափաքին համաձայն անուանի բժիշկին գաղափարք ու առողջապահական յանձնարարութիւնները առնելէ յետոյ կը վերադառնայ Եգիպտոս, ի մեծ գոհունակութիւն Մէհմէտ Ալի բաշային, որ զինքը կ'ընդունի արքայազայել վարձատրութիւններով:

Բարձն ու պատիւը սակայն չեն ըլլացրներ բնաւ Բէստէնի աչքերը. իւր արքունական վայելքին ու դիրքին մէջ նա չի մոռնար բնաւ իւր Ազգը, ինչպէս նաև Հայ բժշկական գրագիտութեան խեղճուկ վիճակը, ու անոր ծառայութիւն մը մատուցանելու բուն սիրով՝ կը նստի զրել 1818ին իր «ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ» անունով ընդարձակ գործը, զոր հազիւ երեք տա-

1. «ԱՆԿԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ» 1898 էջ 367.
2. «ԱՆԿԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ» 1911 էջ 420.
3. «ԱՆԿ»:

բիւն կ'աւարտէ, զի միջանկեալ ծանր հիւանդութիւն մը երեք ամիսի շափ կը տանջէ զինքը ու արգելք կ'ըլլայ անոր շարունակութեանը:

*
**

1821 յունիս 18ին է որ Բէստէն ճամբայ կը հանէ իր այս աշխատութիւնը և կը յղէ Վենետիկի վանքը՝ առ Հ. Գարբիէլ Վ. Աւետիգեան, որպէս զի տպագրութի, ինչպէս կ'իմանանք անոր մէկ նամակէն, զոր հրատարակած եմ 1901ին, (Հ. ԱՄՍՍՐԵԱՅ 1901 էջ 81):

Ս. Ղազարի մամուլը զայն լոյս կ'ընծայէ 1822ին, գեղեցիկ ու ինամուած տպագրութեամբ, որուն բոլոր ծախքերը հեղինակը ինք կը հոգայ, ինչպէս կը կարդանք Հատորներուն ճակատը:

Կ'ենթադրեմ՝ որ 1822 տարիին Ապրիլ ամիսին մէջ տեղի ունեցած ըլլայ Առաջին Հատորին հրատարակութիւնը, Մայիսին ալ երկրորդինը, որովհետև Բէստէն երբ իւր գործը 1821 յունիս 18ի նամակովը Վենետիկ կը ղրկէ, Հ. Գարբիէլ վարդապետէն կը ստանայ պատասխան մը՝ որ կը կրէ՝ «1822 յունուար 19» թուականը, և որով կը տեղեկացնէ թէ ԲժՇԿԱՐԱՆԸ արդէն յանձնուած է տպագրութեան. ուստի անհաւանական չէ ընդունիլ, թէ երեք ամիս մը գոնէ ողետք եղաւ անոր աւարտումին:

Երկու միջակ հատորի մէջ ամփոփուած է Բէստէնի երկասիրութիւնը. ամէն մէկը 400 կամ էջ, բայց այնպիսի մանրիկ գիրերով, որ եթէ ուզենք զանոնք այժմեան սովորական տառերով վերատպագրել, անկասկած չորս հինգ հատոր բան կ'արտադրենք:

Առաջին Հատորին երեսգրիբը, զոր շարագրած են նոյն իսկ Միխիթարեան տպագրչները, հետեւեալն է.

ԲժՇԿԱԿԱԿՆՈՒԹԻՒՆ

Բաժանեալ յերկուս հատորս
Ինքնաշան աշխատասիրութեամբ Պարոն
ՄԻՔԱՅԷԼԻ ԲԷՍՏԷՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Բժշկի Եգիպտական բոլեշխն և յատուկ
ծախիւք հեղինակին տպագրեալ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ի վերայ ազգի ազգի խօթութեան և նոցին պատճառաց, նշանաց և խնամատարութեանց

Ի Վենետիկ

Ի Տպարանի Սրբոյն Ղազարու

1822

Ա՛յրողջը գրուած է ընտիր դասական գրարարով, և արդէն ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, քանի որ Բէստէն Վենետիկի վանքին մէջ մայրենի լեզուն ուսած էր մեծանուն Հ. Գարբիէլ Վ. Աւետիգեանէն և ասոր աշակերտէն՝ հռչակաւոր հայագէտ և քերթող Հ. Արսէն Բագրատունիէն:

Այս առաջին Հատորը սկիզբն ունի բուական երկար Յառաջաբանութիւն մը, որուն մէջ Բէստէն՝ նախ բժշկական աբուստին գովաբանութիւնը ընելով, զայն «Աստուածային գիտոսրիւն» մը կը համարի. փիլիսոփայութեան խիստ կարևոր և պիտանի մէկ մասն է այն՝ կ'ըսէ, և ցուցելով կը ցուցի, որ մեր Ազգին մէջ եղած չին բնաւ հայերէն լեզուով բժշկական գրուածներ, թէպէտ միանգամայն ալ կը հաւատայ, թէ որչոտ ժամանակը և օտար ցեղերու արիւնահեղ բարբարոսութիւնները, որոնք շարունակ Հայ Ազգութեան շարադէտ բաժինն եղած են, կու տուած՝ անհետացուցած ըլլան մեր նախնայրերուն շատ մը գործերը ու աշխատասիրութիւնները, որոնց մէջ անպայման կը գտնուէին նաև բժշկականներ:

*
**

Չարմանալի է դիտել, որ Բէստէն Տէր Պետրոսեան բժիշկէն առաջ, Յովակիմ բժիշկ Օղուլուսեանը 1806ին իր «Նիոթ

1. «ԱՆՆՅԻՍ ԱՄՍՐԵԱՅ» 1901 էջ 82.

բժշկական»ին Յառաջարանին մէջ նոյն ցարը կը յայտնէր. թէ և ասոնցմէ դարեր առաջ ալ Միխիթար Հերացի բժշկապետը 1184ին «Ջերմանց Միխիթարոսի»ը գրած պահուն ողբալով կ'ողբար Հայ բժշկական երկերու չգոյութիւնը, և իրաւամբ, որովհետեւ իր ատենը իրմէ հին Հայ բժիշկի մը աշխատութիւնը չէր յայտնուած: Ամիրտովմաթ Ամասիացի բժիշկը սակայն, հակառակը կ'ընէր և 1482ին գրի առած «Աղցիոսց Ակպիտ»ին մէջ յիշատակելով կ'արձանագրէր հին և հնագոյն Հայ բժիշկներու աշխատութիւնները, զորոնք՝ ժիւ-ժիւ դարերու Հայ Բժշկական Պատմութեան խօսուն անդրինները կարելի է համարել:

Կ'Յրի որ ոչ Ողուտիւսեան, ոչ ալ Բէստէն տեղեկութիւն չունէին նախնի Հայ բժիշկներու մասին. լսած չէին Միխիթար Հերացիին, Ճոշլին, Շմաւոն կամ Սարգիս, վաւրամ բժիշկները, Ամիրտովմաթը, Ասաբը, Պոնեսաթը և ուրիշներ, որով՝ ուզած են զուցէ ինքզինքնին իբրև առաջինը ներկայացնել, Հայ բժշկական Մատենագրութեան համար գրիչ շարժող:

* *

Յառաջարանութեան այս մասէն յետոյ, Բէստէն կը գծէ երկար տեղեկութիւն մը իւր Բժշկարանին վրայ. տեղեկութիւն՝ ուրկէ կ'իմանանք, թէ այս Առաջին Հատորին մէջ ամէն տեսակ արտերու զլխաւոր նշանները և պատճառները կը նշանակէ, և կը յանձնարարէ անոնց բուժումին համար հարկ եղած դեղերը ու ինամատարութիւնը. և կը յաւելու՝ թէ իր աշխատութիւնը կը շարադրէ՝ առաջնորդ ատենով երևելի հեղինակաւոր բժիշկներու փորձառութեան արդիւնքը:

Ամրողը զորձը կը բաժնէ 41 Գլուխներու, և ասոնք ալ շատ մը զլիւիկներու, յողուածներու և յողուածիկներու: Հաբնացի ակնարկ մը միայն ասոնց վրայ, բաւական թող ըլլայ գաղափար մը կազմելու այս Բժշկարանին ընդարձակու-

թեանը և անոր բազմազունակ ճոխ պարունակութեանը մասին:

Առաջին Գլուխը կը իւսի՝ բուր տեղեկերու (fièvre) վրայ ընդհանրապէս, յետոյ մասնաւորապէս՝ ընդհատ (intermittente), յարալար (pérnicieuse), սերնդնատ կամ շարունակ (continue), ջրակաւ (nerveuse), շարախտալատ (maligne), բույսկոն (rémittente), ստամոքակաւ (gastrique) և այլն, կոչուած տեղեկերու վրայ. բաւական լաւ գիտածներու բացատրութիւններ կու տայ անոնց վրայ, բայց յայտնի է՝ որ տեղեկութիւն ընաւ չունի Միխիթար Հերացիի «Ջերմանց Միխիթարոսի» լուրջ աշխատութեանը մասին, եթէ ոչ՝ Բէստէն աւելի ճոխացուցած պիտի ըլլար տեղապատում այս գլուխը՝ հայ նշանաւոր բժիշկին գաղափարներով:

* *

Երկրորդ Գլուխին նիւթն է՝ Ընդհանոր բորբոքումները (inflammation), և ի մասնաւորի ալ՝ ուղեղի (inflammation du cerveau), աչքի (ophtalmie), ականջի (otite), լեզուի (glossite) բորբոքումները, և ապա՝ որկորի բորբոքումը կամ փոքուցարոսիներ (angine), յար փոքուցարոսիներ (angine gangreneuse), բորբոքում բորբոքումը (péripleumonie) և լանդու մաշի բորբոքումը (pleurite), ինչպէս նաև սրտի (cardite), ստոծանոյ (diaphragmite), ստամորսի (gastrite), փորտուկ կամ ստորին որովայնի (entérite), լերդի (hépatite), փայծաղի (splénite), երկամանց (néphrite), փամփուռի (cystite), և արզակի (métrite):

Հոս դիտելի է, որ Բէստէն՝ Եւրոպական Ախտաբանութեան մէջ ընդունուած ու նուիրագործուած՝ որ և է գործարանի մը բորբոքումը՝ (inflammation) որակող ու յայտնող (ITE) վերջաւորութեան փոխանակ, կը գործածէ «բորբոքում» բառը: Այս կէտը վաղուց ևս ուշագրութեան առած ըլլալովս, 1882ին Պարիսի

մէջ ղեռ ուսանող եղած ժամանակս, երբ Ամբրոսիոս Գալֆայեանէ (կամ Լուսինեանէ), իր քով կը կանչուէի երբեմն, կարգ մը վիրաբուժական գործիքներու կամ բժշկական բաներու վրայ տեղեկութիւններ, բացատրութիւններ տալու, որպէս զի անոնց հայերէնները գտնէր և կերտէր իւր Ֆրանսահայ ընդարձակ Բառարանին համար, առաջարկած էի՝ թէ արդեօք կարելի չէ՞ր՝ որ մենք ալ բարբարոս բառին առաջին բարբ վանկը ընդունէինք իբր համանշանակ «ITE» վերջատրութեան, և ըսէինք՝ յերդարորբ (hépatite), յնդուարորբ (glossite) զնդարորբ (glandite) սկրարորբ (ostéite), արգանդարորբ (métrite), ուկնարորբ (otite), սկնարորբ (ophtalmie), չորարորբ (névrite) և այլն:


Լուսինեան շատ պատշաճ գտնելով առաջարկս՝ ըստ այնմ նշանակել որոշեց Բառարանի բառերը, ինչ որ դիրսին է հաստատել՝ կարգալով անոր հոյակապ Բառարանը, ըլլալ առաջին Տպագրութիւնը կամ Երկրորդը՝ որուն Յառաջարանութեանը մէջ ողբացեալ Տիկին Արշակունհի թէոդիկ կը յիշատակէ և իմ երբեմնի աշխատակցութիւնս՝:

Արդի գրող Հայ բժիշկներու ուշադրութեանը կը յանձնարարեմ այս, ու կը յարեմ, թէ գործարաններու բորբոքումները փոխանակ ԲՈՐԲ վերջատրութեան «տապ» մասնիկով որակելը սխալ մ'է. որովհետև «տապ»-ը բորբոքում չի նշանակիր, այլ բորբոքումէ յառաջ եկած տապութիւնը, տաքութիւնը կամ ջերմութիւնը. (զի բոցէ զծագ մտտին իւրոյ ի ըտր և զու վագուսցէ զիզոս իմ, զի պապսկիմ ի ՏԱՊՈՅ աստի: Դուկ: Ժ.Չ. 24):

ՏՕԲԹ. ՎԱԷ. Յ. ԹՈՒՐՈՍԵԱՆ
(Շարումակիլի)

ՀՆԱԽՈՍՍԿԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ (ABSTINENCE)



Ապաշխարութիւն բառս այլևայլ նշանակութեամբ գործածուած է մեր լեզուին մէջ: Բուն իմաստն է՝ լրած յանցանաց վրայ գղջում, ցաւ զգալ և զգաստանալ, և ասոր համար կրել կամաւոր վիշտ, նիւնուցացոց օրինակ՝ որ խորպով և մուխրով և պահեցողութեամբ զվիշուցին իրենց մեղաց համար եղած Աստուծոյ զայրոյթը: Սոյն բառը կը գործածուի նաև նշանակելու համար խոստովանութեան սուրբ խորհուրդը: Դարձեալ կը ներփակէ իր մէջ ժուժկալութիւն, պահեցողութիւն և այլ առաքելական գործեր: Իսկ ընդհանուր առմամբ կը հասկնանք բոլոր այն գործնական արտաքին զրկումներն, որոնց մարդս կամաւոր կերպով զինքը կ'ենթարկէ և ունի իր մէջ աստիճանաւորութիւն, ինչպէս Ա. Ժոսփալուարիս բոց կերակուրեթեք, այսինքն չորեղէն սնունդ միայն առնուլ, և ըստ Ս. Կպիփանու միայն առնուլ հաց, ալ և ջուր. ըստ առաքելական սահմանադրութեան կրնան առնուլ նաև բանջար և պտուղ: Եւ արգիւլուած բաներն են միս, ձուկ, հաւկիթ, կաթ, կարագ, պանիր, զինի, ձէթ, և կը կոչուի այսպիսի պահեցողութիւնը՝ յոթակերութիւն (xerophagie): Բ. Ժոսփալուարիս զիեսոյ և միսի. Ս. Կիրեղ Երուսաղեմացի կ'ըսէ. կը հրաժարինք զինիէ և միսէ պահեցողութեամբ (Μη στερουμεν ψάρ οίνου τε καὶ κρεῶν ἀπεχόμενοι): Գ. Պաւլեցողութիւն արիւնի և հեղձացեալ մեռ. Գործք առաքելոց կը հրամայէ զայս՝ քրիստոնէութեան սկզբնաւորութեան ժամանակ՝ որ էր հրէական սովորութիւն:

Եկեղեցւոյ նպատակն է՝ այս ժուժկալութիւններս հրամայած պահուն՝ մարմնաւոր մահացուցում ապսպրել հաւատացեալներուն, զիրենք պահպանելու համար հոգեկան անկումներէ և աւելի արժանա-

1. «ՆՈՐ ՏՈՒՆԱՍԱԼՈՅ ԲԱԶՄԱՆ» Լուսինեան, Կ. Պուլսի Բ. Տիպ. 1910, Բ. Հատորին Յառաջարանութիւնը: